ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր 07.05.2021թ. հ.159 գրության՝ տեղեկացվում է.

«Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերության մասնագետների ուսումնասիրությունից պարզվել է, որ Սարի թաղի 15-րդ, ինչպես նաև մի շարք չլուսավորված փողոցներում անհրաժեշտ է կառուցել արտաքին լուսավորության ցանց: «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունը շահագործող և սպասարկող կազմակերպություն է և նմանատիպ աշխատանքների համար չունի ֆինանսական միջոցներ, իսկ վերոնշյալ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցումը պահանջում է իրականացնել մեծածավալ աշխատանքներ, ուստի՝ վերոնշյալ տարածքներում արտաքին լուսավորության ցանցի կառուցման համար անհրաժեշտ է կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր և ներառել Երևանի քաղաքապետարանի շինարարական ծրագրերում, իսկ արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ավարտից հետո շահագործման հանձնել «Երքաղլույս» ՓԲ ընկերությանը:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 2021 թվականի աշխատանքային ծրագրերով արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ նախատեսված չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ